

Տարեկան գինը 10 ռուբլի. կես տարվան 6 ռուբլի.
Առանձին համարները 5 կոպեկով.

Թիֆլիսում գրվում են միմյան խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисъ, Редакция «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տ է Լ է Ֆ օ Ն № 253.

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐՇԵՐՈՒՆԻ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի եւ սոսն օրերէն).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լիզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպեկ.
Տ է Լ է Ֆ օ Ն № 253.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Տեղական կազմակերպութիւն. Ներքին
ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մասնակցութիւն. Նամակ վա-
ղարկատեղ. Նամակ Խմբագրութեան. Նա-
մակ Խմբագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐ-
ՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Ձիւնական գործեր. Նա-
մակ Գերմանիայից. Արտաքին լուրեր.—ՀԵ-
ՐԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—
ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Հայկական տպագրութիւն.

ՏԵՂԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆ

Կովկասեան կառավարչապետ իշխան Գ.
Գոլիցին գիմել է երկրագործութեան մի-
նիստրի կովկասեան իրադորն. Մերքին
վին մի հարցով, թէ որքան նպատակա-
յարմար կը լինի կովկասեան անասնապա-
հութիւնը զարգացնելու նպատակով հիմ-
նով տեղական մասնագործները, կազմված
տեղական գիւղատնտեսներէն, և անասնա-
պահութեան մէջ հմուտ անձներէն:

Տեղական մասնագործները հիմնելու ա-
ռաջարկը հանդէս է եկել Մոսկվայում
այնտեղի Գիւղատնտեսական ընկերութեան
մէջ: Այդ ընկերութեան նախագահը գիմել
է հեղինակաւոր հիմնարկութիւնների և
ընկերութիւնների ներկայացուցիչներին,
ինչպէս յայտնել կարծիք մասնագործ-
ների կազմելու առաջարկի մասին: Նոյն
ինչպէս նա գիմել է և Կովկասեան կառա-
վարչապետին:

Նոյն ցանկալի է, որ այդ հարցի վե-
րաբերութեամբ կարողանային մեր գիւղա-
տնտեսները յայտնել իրանց հայեացքները և
պարզելն թէ ինչ միջոցներով կարելի է
բարձրացնել տեղական անասնապահու-
թեան վիճակը: Կովկասեան անասնապա-
հութեան ամենամեծ պահասութիւններից
մէն այն է, որ նա բաւարար կերպով ա-
պահովված չէ մարդագետներով, արօտ-
ներով և ձմեռվայ կերակրի մեծ պաշարով:
Իսկ այսպիսի հանգամանքներում անկարելի
է ազնուացնել կենդանիների տեսակը
թէ տեղական միջոցներով և թէ արտա-
սահմանից բերված ջեղերով: Միւս կողմից
անհերքելի է և այն, որ մի քանի տեղե-

րում, ուր սկսել է տարածվել կատարեա-
գործված կաթնասնտեսութիւնը, օրինակ,
Բորչալուի գաւառի պանրագործական տըն-
տեսութիւնների մէջ, այժմ մեծ ուշք է
գարձվում անասնապահութեան վրա և
ջանքեր են գործ դրվում ապահովելու
կենդանիների խնամատարութիւնը ամբողջ
տարվա ընթացքում:

Մեր կարծիքով այժմ վաղաժամ է տե-
ղական կառուցատնտեսներից կազմված մասնա-
գործները հիմնելը: Մեր գիւղատնտեսները
գեռ չեն զբաղվի այդ գործով: Սկզբում
կարելի կը լինէր հիմնել մի կենտրոնական
մասնագործ, նման այն մասնագործներին,
որոնք հիմնված են տնայնագործութեան
զարգացման և ֆելդիտեան ջնջելու նը-
պատակով: Այդ մասնագործը, կազմ-
ված լինելով մասնագէտներից, տեղական
գիւղատնտեսներից, Գիւղատնտեսական ըն-
կերութեան ներկայացուցիչներից, կարող
կը լինէր մշակել անասնապահութեան
զարգացման խնդիրները և սկսել գործնա-
կան ձեռնարկութիւնները, ասպարէզ հար-
թելու համար ապագայ երկրորդական
տեղական ճիւղերի գործունէութեան հա-
մար:

Պէտք է նկատել, որ այժմ բարձրագոյն
ընթացքում մեծ համակրութեամբ են վե-
րաբերվում անասնապահութեան զարգաց-
ման խնդրին, և ֆինանսների մինիստրու-
թիւնը պարտաւոր է ապա արդէն նպատակի
համար նոյն իսկ մի քանի միլիոն ռուբլի:
Պէտք է օգտվել այդ բարի տրամադրու-
թիւնից զարգացնելու և ծաղկեցնելու գիւ-
ղատնտեսութեան այդ կարեւոր ճիւղը և
մեր երկրում, որ անասնապահութեան
համար ունի մեծ յարմարութիւններ:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Մ Ա Տ Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ն

В. Вартаньянцъ. „Учение Л. Н. Толстого, какъ идеа-
лизация работы“. (Критическій опытъ). 56 стр.
и. 35 к. Тифлисъ 1900 г.

Իր քննադատական փորձի առաջարկում

հայրենի մէջ, քանի որ քրիստոնէայ ամբողջ
տեսնում էր իր եկեղեցին ստորացած, անպա-
տիւ դարձրած: Իսկ եկեղեցուն այսպիսի մա-
հացու հարուածներ տուողը միայն իսկամբ չէր
իր անարդար օրէնքներով և ֆանատիկոսա-
կան բռնութիւններով: Նրա թողած պահաւոր
լուրի լրացման էին իրանք քրիստոնէաները:

Սակայն ձեռք առած նախագիտութիւնները
չօգնեցին Պրօպագանդան, հէնց որ լուս առաւ
թէ հայ տպարանը բացվել է Մարտի 1-ում, շու-
պեց հրամանագրել տեղական եպիսկոպոսին,
որ իր հակողութեան տակ առնէ Ոսկանին, ո-
րովհետեւ նա յարաբերութիւն ունի էյմիլիանի
կաթողիկոսի հետ: Հռոմում հայ տպարանի ա-
դիթով վախճանուն բարձրացողներ քիչ չը
կային և դրանց միացաւ հ. Պիլու, որ նոր էր
եկել Լեհաստանից մի քանի հարցեր պարզելու
համար: Նիկիոյ արդէն բաւականաչափ կարո-
ղացի էր ձանձրացնել կաթողիկոսի հոգեւորական-
ներին, որոնց նա այլ ևս չաւ հարկաւոր չէր,
ուստի և կանչվել էր Հռոմ, ուր պատուաւոր
բանտարկութեան էր ենթարկված, պահելով իր
աստիճանը և Լեհաստանի հայերի առաջնոր-
դական պաշտօնը: Պիլու պահանջում էր Հռո-
մի կալանաւոր արքեպիսկոպոսից, որ Լեհաս-
տանում մնաւ միմիայն այն մի քանի հատ
հայերէն գրքերը, որոնք արագրված էին և
ուղղափառ դարձրած Հռոմում, իսկ մնացած
գրքերը, իբրեւ հերձուածողական, ոչնչացնել-
նա մինչեւ անգամ չէր ուզում, որ այդ հեր-
ձուածողական գրքերը յանձնվին արեւելեան
հայերին: Կաթողիկոսի կղերի հայեացքներին չը
համապատասխանող գրքերը մի սարսափելի
թշնամի էր, որին պէտք էր անհետացնել աշ-
խարհից:

Անա հայ գրքերի այս ուխտեալ թշնամին

պ. Բ. Վարդանեան ասում է, զ. Տօլստոյ ե-
ղաւ ոչ միայն ուսն հասարակութեան ա-
մենալուսաւոր և ամենամարդասէր
ձգտումն էր ամենախոշոր արտա-
յայտչիւններից մէկը, այլ—որ առանձնա-
պէս ցաւալի է,—նա եղաւ աւելի ևս խոշոր
արտայայտիչ ուստաց պատմութեան և ուսն
կենքի ստուերային կողմի: Ես գրեթէ բացա-
ռապէս կանգ եմ առնում «մեծ գրողի» վար-
դապետութեան հէնց այդ վերջին կողմի վրա:
Քննելով Լեւ Տօլստոյի վարդապետութեան
մեթոդը կողմերը, ես լաւ յիշում եմ Շօպենհաու-
րի խօսքերը: «Աւելի հեշտ է, ասում է նա,
ցոյց տալ սխալները և մոլորութիւնները մեծ
խելքի արտադրութիւնների մէջ, քան պարզ
և լիակատար զաղափար տալ նրա արժանա-
ւորութեան մասին»:

Հետաքրքիր է, ինչպէս է հեղինակը հաշ-
տեցնում այդ առաջարկը գրքերի վերնագրի
և հիմնական մտքի հետ—թէ Տօլստոյի վար-
դապետութիւնը ստրկութեան իդէալացումն է:
Երկուսից մէկը,—կամ Տօլստոյ չէ իդէալաց-
նում ստրկութիւնը, կամ նա անում է այդ և
հետեւաբար չէր կարող լինել ուսն հասարա-
կութեան ճամնալուսաւոր և ամենամարդա-
սէր ձգտումների ոչ միայն ամենախոշոր, այլ
և երկրորդական արտայայտչիւններից մէկը:

Հեղինակը ուրիշ կարծիք ունի: «Պիլուի
ասում է նա, որ Տօլստոյ, իդէալացնում է (թէ և
անգիտակցաբար) ստրկութիւնը և կոռուորու-
թիւնը (братство), ես ամենեւին չեմ մոռա-
նում, որ դէմօկրատ—Տօլստոյը գիտակցա-
բար քարոզում է ստրկութեան ու կոռուոր-
ութեան անբարոյականութիւնը, մի մարդու
միւսին հարստանալու անբարոյականութիւնը:
Ձեռն մոռանում նոյնպէս, որ շատ յաճախ Տօլ-
սոյ պնդում է, թէ աշխատանքի արդիւնքները
պէտք է պատկանեն իրան, աշխատողին» (Եր.
40—41):

Ձը գիտե՞ք, թէ ինչպէս կարելի է աւելի
լաւ մոռանալ այդ, քան այդ արել է պ. հեղի-
նակը իր ամբողջ գրքովում, բացի այդ կողմից:
Իմը նրանումն է, որ պ. Վարդանեան ինչ-
պէս ուսնները ասում են, «ХВАТИТЬ ЧЕРЕЗЪ
КРАЙ».—Տօլստոյ երբեք չէ իդէալացնում
ստրկութիւնը, բայց ճիշդ է, որ նա հասարա-

Հռոմից գնալով Տօկանա, հանգիստից այնտեղ
Մարտի 1-ի եպիսկոպոսին, որ ֆրանսիական կա-
ռավարութեան կողմից դեպպանութեան պաշ-
տօնով եկել էր Տօկանայի իշխանի մօտ: Հ.
Պիլու իսկոյն խօսք բացեց Ոսկանի տպարանի
մասին և ակնք թախանձանքով խնդրել եպիս-
կոպոսից, որ նա հայերին թող չը տայ տպագ-
րել մի կաթողիկոսի պետութեան մէջ և մանա-
ւանդ մի բարեպաշտօն եպիսկոպոսի վիճակի
մէջ չիմարական գրքեր, որոնք մեծ վնաս են
կաթողիկոսի հաւատին: Մարտի 1-ի եպիսկոպոսը
խնդրեց նրան գրաւոր տեղեկութիւններ տալ
իրան թէ տպարանի և թէ Ոսկանի մասին,
որին նա կաթողիկոս էր համարում: ստանալով
այդ տեղեկութիւնները, նա խոստացաւ ամեն
ջանք գործ դնել Պիլուի «օրինաւոր պահանջը»
կատարելու համար *): Եւ իբրեւ, եպիսկոպոսը
խիստ միջոցներ ձեռք առաւ, որ Ոսկանը չի-
մարական գրքերը չը տպագրէ. նախ նա պա-
հանջեց, որ վարդապետը հայերէն և լատինե-
րէն լիզուով գրէ թէ ինքը կաթողիկոս է. ապա
յանձնեց իր փոխանորդին հակել տպարանի
վրա, իսկ տպուկի գրքերի ընդունելիւնը իր վրա
առաւ: Ինքը հայերէն չը գիտէր, և գրաքննի-
չի պաշտօնը պիտի կատարէր մի հայ քահանայի
միջոցով, որ պիտի ուղարկվէր Հռոմից:

* Քանի միջնորդների ճնշման տակ էր դրված

*) «Ընդիմ միութիւն», Եր. 232: Այսպէս է պատ-
մում ժամանակակից մի կաթողիկոս, ըստ երկուսի,
հոգեւորական և Պիլուի ընկերակից, Բայց 1895-ին Վե-
նետիկում հրատարակված «Պատմութիւն հայկական
տպագրութեան» գրքի մէջ կարգում ենք (Եր. 124),
«Հայոց պաշտպան կեցող եկեղեցականաց մէջ նշանու-
որ եղաւ նախ հայրն Փիլոս (Pidou) վարդգի, գիտ-
նական կրօնատարն Թէաթիսեան և առաքելական քա-
րովի, որ ան կեղծ աղաւթ է և հաւատար լուսա-
մտութեան մը 1666-ին մայր եկեղեցու գիրկն ա-
ռաջնորդեց Լեհաստանի հայոց գաղթականութիւնը»:
Անա թէ ինչպէս են պատմութիւն գրում Ս. Կապրի
վանքում:

կական ազատ կազմակերպութեան չէ տալիս
այն կարեւորութիւնը, որին նա արժանի է,
և այդ մասամբ այն պատճառով, որ նա առ-
հասարակ մեծ նշանակութիւն չէ տալիս հա-
սարակական կազմակերպութեան, բարոյական
հարցերի ծանրութեան կենտրոնը տեսնելով
մարդու անձնաւորութեան և ոչ թէ չըջա-
պատող պայմանների մէջ: Եւ այդ շատ հա-
կանալի է, եթէ ի նկատի ունենանք, որ Տօլ-
սոյ բարոյագէտ (моралистъ) է մինչեւ ուղ ու
ծուծը:

Ինչպէս հասարակագէտը (սոցիոլոգ) իր ու-
ղարկութիւնը գլխաւորապէս կենտրոնացնում
է այն հարցի վրա, թէ ինչ ազդեցութիւն ու-
նեն չըջապատող պայմանները, միջավայրը,
հասարակական կազմակերպութիւնը անհատի
վրա, եւ ուսումնասիրում է այն հարցը, թէ
ինչ է անհատը իբրեւ հասարակութիւն կող-
ված ամբողջութեան բաղադրիչ մաս միւս բա-
ղադրիչ մասերի հետ ունեցած իր փոխադարձ
յարաբերութիւնները և ազդեցութիւնների
մէջ,—այնպէս էլ բարոյագէտը գնում է մար-
դուն իբր մի անհատ կանգնած ընդմիջեան ա-
ռաջ, իբր «ես» հակադրված «ոչ ես»-ին, ար-
տաքին աշխարհին:

Դրա շնորհիւ է, որ որքան հասարակագէտը
տրամադրի է չափազանցանք կանքի արտա-
քին պայմանների ազդեցութիւնը անհատի վրա,
չնչտեղ պատճառականութեան օրէնքը եւ հակ-
վել դէպի դէտեմինիզմ, այնքան էլ բարոյա-
գէտը տրամադրի է չափազանցանք անհատի
նշանակութիւնը հասարակական կազմակեր-
պութեան նկատմամբ, չնչտեղ պատասխանա-
ւորութեան զգացումները և քարոզել կամքի
ազատութիւնը:

Տօլստոյ ծայրայեղութեան մէջ է ընկնում
այդ բանում—նա ծայրայեղութիւնների մարդ
է—եւ շատ գրուածքներում, մասնաւորապէս առաջ,
գուրս էր բերում վերին աստիճանի բարոյա-
կան ստրկութիւն, մասամբ ցոյց տալու համար
այդ ստրկութիւնի բարձրութիւնը իրանց տեղե-
րից, մասամբ էլ ապացուցանելու համար, որ
բարոյականութիւնը անխախտ է հասարակական
կազմակերպութիւնից: Այն էլ կայ, ի հարկէ,
որ Տօլստոյ ուղղակի բաւականաչափ չէ հաս-
կանում և չէ սիրում անհատի հասարակական

Ոսկանը: Ամենից ծանրն ու խեղդողը այն էր,
որ գրաքննութիւնը իրապէս յանձնված էր հա-
յերին: Եւ այնուամենայնիւ ձեռնարկն արիւ-
րաբ գործի կպաւ ու 1673-ին սկսեց տպագրել
«Գրկուկ կարեւոր» անունով գիրքը, որ օրա-
ցոյցի պէս մի բան էր և պարտականութիւն
էր մէջ գնալու օգտակար գիտելիքներ, մա-
նաւանդ վաճառականների համար: Բայց Ոսկա-
նին ոգեւորողը մի մեծագիր և պատկերազարդ
ժամագրի տպագրութիւնն էր, որի համար էլ
նա ընկերացել էր Համազասպեանի հետ: Մի-
այն սառաղի ոգեւորութեամբ կարելի է բա-
ցատրել այն հանգամանքը, որ Ոսկանը, ինչ-
պէս երևում է, մոռացել էր իրան չըջապատող
իրականութիւնը, մոռացել էր որ ժամագիրքը
այնպիսի մի հրատարակութիւն էր, որի վրա
կաթողիկոս գրաքննութիւնը կարող էր իր բոլոր
խստութիւնները ցոյց տալ: Երեւի, ձեռնարկ
տպագրելը յոյս է ունեցել մի կերպ քննադնել
այդ արգելքն կամ գոնէ ազատել նրա ճանկե-
րից շատ այնպիսի բաներ, որոնք կարող էին
ուղարկութիւնից վրեպել: Բայց այդ դէպքում
կար ընտանի մասնիչը: Ըստ երեւոյթին, Հա-
մազասպեանը պիտի նոյնպէս ցանկանար որ
ժամագիրքը անվտանգ դուրս գայ ամառի տա-
կից, քանի որ նրա տպագրութեան համար
ծախսվում էր և նրա փողը: Սակայն այդպէս
չեղաւ: Գրքի առաջին թերթը դեռ նոր էր մա-
մուլի տակ մտել, երբ Համազասպեանը, ինչ-
պէս ասված է Ոսկանի բերանից մի յիշատա-
կարանում, «կառուցեց անօրէնութեան ամբողջ-
ներ և զղեւաններ»: Նրա միտքն էր խափանել
ոչ միայն ժամագրի տպագրութիւնը, այլ և
ամբողջ տպարանը: Այդ սեւ նպատակին հա-
նելու համար բաւական էր տանջել առանց այդ
էլ շատ տանջված ու չարարված Ոսկանին:

Типографія Грузинск. Т—ва. Большая-Ванская ул. № 27.